



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԻՆ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ  
 Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Շաբաթ, Մարտ 17-ը Սրբոց Քառասնից Մանկանց տօնն է, միաժամանակ Օրենճ Քաունթիի մեր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Կիրակի, Մարտ 18-ին, Ս. Պատարագ պիտի մատուցանէ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոզ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Հրանդ Քինյ. Երեցեան:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ բոլոր ննջեցեալ բարերարներուն եւ նուիրեալ ծառայողներուն հոգիներուն համար տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, որմէ ետք պիտի կատարուի մատաղօրհներքի արարողութիւն:

Ս. Պատարագի աւարտին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՀՈՒՓՍԻՄԷ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Կիրակի, 18 Մարտին, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի նաեւ Մայր Հռիփսիմէ Սասունեանի հոգւոյն համար, անոր մահուան եօթնօրեքին առիթով:

Ազգ. Առաջնորդարանը անցեալ շաբաթասկիզբին ցաւով իմացաւ, որ 12 Մարտի առաւօտուն, Պոլսոյ մէջ վախճանած է Մայր Հռիփսիմէ Սասունեան:

Մայր Հռիփսիմէ ծնած էր Պէյրութ. աւելի քան 50 տարի առաջ կրօնական ծառայութեան կոչուած էր Պոլսոյ մէջ ու տարիներ շարունակ վարած էր Գալֆայեան որբանոցը:

90-ականներուն, ան քանի մը տարի վարած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Թռչնոց Բոյն» որբանոցը (Ճիպէյլ), ապա վերադարձած է Պոլիս:

Յանուն մեր Թեմի ժողովականութեան, Առաջնորդ Սրբազան Հայրը իր ցաւակցութիւնները յայտնեց Սասունեան, Կիտցիսեան եւ Սարգոյեան ընտանիքներուն, իրենց քրոջ, հօրաքրոջ ու հարազատին՝ Մայր Հռիփսիմէ Սասունեանի վախճանումին առիթով:

## **PRELATE TO CONDUCT MASS IN ORANGE COUNTY ON THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH**

Saturday, March 17, is the Feast of the Forty Martyrs and the name day of Forty Martyrs Church in Orange County.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will conduct Holy Mass and deliver the sermon at Forty Martyrs Church on Sunday, March 18. Christian Education Department Co-Director Very Rev. Father Barthev Gulumian and parish pastor Rev. Hrant Yeretsian will assist at the altar.

Following Mass, requiem service will take place for the souls of departed sponsors and dedicated servants of the church, and also for Mother Hripsime Sassounian who passed away last week in Istanbul. Mother Hripsime served the church in Turkey for over 50 years and was the director of the Kalfayan orphanage for numerous years as well as of the Bird's Nest Orphanage in Lebanon for some time. The Prelate expressed his condolences to the Sassounian, Kitsinian, and Sarkoian families for their loss.

After requiem service, madaghorhnek will take place followed by a reception at the conclusion of church services.

### **ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԿԻՆ ԹԻՆԱ ԳԱՐՈՒԼԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Հինգշաբթի, Մարտ 15-ին, նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Ազգային Առաջնորդարան այցելեց Ազգ. Առաջնորդարանի բարերարուհի Տիկին Թինա Գարուլան, եւ ընդունուեցաւ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգ. Վարչութեան փոխ-ատենապետ՝ Տոքթ, Յակոբ Տէր Մկրտիչեանի, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհիին եւ անդամներուն կողմէ:

Տիկին Գարուլան ճաշի հիւրը եղաւ Առաջնորդ Սրբազան Զօր: Նկատի ունենալով, որ այս այցը Տիկին Գարուլանի առաջին այցելութիւնն էր Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնքը, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Գարուլան ընտանիքին՝ իրենց իշխանական նուիրատուութեան համար, ապա գնահատեց եւ օրհնեց Տիկին Գարուլանը:

### **PRELACY BENEFACTOR MRS. TINA CAROLAN VISITS THE PRELACY**

On Thursday, March 15<sup>th</sup>, Prelacy benefactor Mrs. Tina Carolan visited the Prelacy where she was welcomed by the Prelate along with Executive Council Vice-chair Dr. Hagop Der Megerdichian, and the Ladies Auxiliary Guild.

During the reception, the Prelate presented Mrs. Carolan with a memento and expressed his appreciation to her and her family for their benevolence

**Ս. ԳՐԱՅԻՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**  
**Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ**

Հինգշաբթի, Մարտ 15-Էն սկսեալ եւ այսուհետեւ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 6:30-ին, Սուրբ Գրային սերտողութիւն տեղի պիտի ունենայ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, սերտողութիւնները կը կատարէ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

**BIBLE STUDY BEGINS AT ST. GARABED CHURCH**

Beginning on Thursday, March 15<sup>th</sup>, Bible study will be offered each Thursday at St. Garabed Church in Hollywood at 6:30 p.m.

By the ordinance of the Prelate, the studies will be lead by Very Rev. Fr. Barthev Gulumian.

**Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ՀՕՄ-Ի Ա. ՓԻԼԱՎԺԵԱՆ ՄԱՆԿԱՄՍՈՒՐԻ**  
**ՖԵՐԱՀԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**  
**ՏԱՐԵԿԱՆ ՁԵՆՆԱՐԿԸ**

Շաբաթ, Մարտ 17-ին, ճաշկերոյթով մը պիտի տօնակատարուի Սրբոց Նահատակաց ՀՕՄ-ի Աշխէն Փիլավճեան Մանկամտուրի, Ֆերահեան Ազգ. Նախակրթարանի եւ Ազգ. Երկրորդական վարժարանի տարեկան ձեռնարկը:

Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը վայելող այս ձեռնարկը նուիրուած է Մանկամտուրի 15-ամեակին:

Վարժարանի տնտեսական յանձնախումբին կողմէ կազմակերպուած ձեռնարկը տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգ. վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ, Էնսիսօ, երեկոյեան ժամը 7:30-Էն սկսեալ:

**PRELATE TO ATTEND BANQUET OF**  
**HOLY MARTYRS A.R.S. PILAVJIAN PRE-SCHOOL AND**  
**FERRAHIAN ELEMENTARY AND HIGH SCHOOL**

On Saturday, March 17<sup>th</sup>, the annual banquet of Holy Martyrs Ferrahian Elementary and High School, and Holy Martyrs A.R.S. Ashkhen Pilavjian Pre-School will take place at Avedissian Hall in Encino.

The banquet, organized by the school's Finance Committee in honor of Pilavjian Pre-School's 15<sup>th</sup> anniversary, is being held under the auspices of and with the attendance of the Prelate.

## ՄԱՇՏՈՅ ՔՈԼԵՃԻ 15-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Շաբաթ, Մարտ 17-ի երեկոյեան, պիտի տօնակատարուի Մաշտոց Քոլեճի հիմնադրութեան 15-ամեակը: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Verdugo Hills Country Club-ին մէջ: Առաջնորդ Սրբազան Զայրը, ընդառաջելով իրեն տրուած հրաւերին, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

Նշենք որ, Գոլեճի հիմնադրութեան առթիւ, Ուրբաթ, Մարտ 16-ի երեկոյեան, ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Կեդրոնական Գրադարանի հանդիսասրահին մէջ:

### PRELATE TO ATTEND 15<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION OF MASHDOTS COLLEGE

On Saturday, March 17<sup>th</sup>, the 15<sup>th</sup> anniversary of Mashdots College will be celebrated at Verdugo Hills Country Club. The Prelate will attend and convey his blessings.

On this same occasion, a slideshow is scheduled for Friday, March 16 at the Glendale Library.

### ՔԱՅԱՄԻ ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Կիրակի, Մարտ 18-ի կ.ե. ժամը 4:30-ին, Զ.Ս.Ը.Ս.-ի ՔԱՅԱՄ-ի մարզախաղերուն փակման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կլենտէյլ Գոլեճի մարզադաշտին մէջ:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ փակման հանդիսութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

### PRELATE OFFERS HIS BLESSINGS TO THE KAHAM GAMES CLOSING CEREMONY

On Sunday, March 18, the closing ceremony of the Homenetmen KAHAM games will take place at Glendale College.

Rev. Ardag Demirjian, pastor of St. Mary's Church, will attend the ceremony to convey the Prelate's blessings.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org), Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.